լեցուեր է ծովուն մէջ 60 ոտք բարձրութեամբ, որ հիմայ նաւահանգստին մեծ ամրութիւն է. բայց ծովուն տակը բոլոր լաւան տարածուած ըլլալով՝ յատակը բարձրացած է, որով մեծ նաւերը նաւահանգիստը չեն կրնար մտնել։ Բաղաքիս գլխաւոր վաճառքն է բամբակ և մետաքսէ կերպասներ։ Բաթանայի քովի երկիրներէն կ'ելլեն, ցորեն, գինի, կտաւ, ձէթ ու մետաքս։ Բնակչաց թիւն է 45,000։

Մեր հոս դրած պատկերին աջակողմը երևցած շէնքը՝ Բաթանայի բերդն է, որ անցեալ տարի Միկիլիոյ խռովութեանցը պատճառաւը շատ վտանգեցաւ։

ԾԱՂԿԱՖԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ

Բ.

Լոգաւորական, Փէղ, Յրեվարդ։

ՏԵՍԱՆԷԱՔ զԹագաւորական հաւ՝ որոյ տեսակն ցանկալի էր, զի ընդ դեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համաւարխառնեալ արտաքս ճոզճայը, և լանջուցն կարմրանիշ գոյն այսր անդր տրոհեր շուրջ զպարանոցաւն առ միմեանս պատուածեալ, և նման գարնանային առաւօտու ցողոյ կայլակք յանդաստանս զոսկեծայր քսակս մարգարտաձև 'ի վայր կախեալ բոլորովիմբ. այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև կտցոյն փողոտաձգութիւն 'ի վայր կոյս դարձեալ զբերանովքն կռանայր, որում բոլորատեգ զեղջն ծայր՝ իբրու գնդանաց ցցեալ զբարգաւանգ ճռուողումն ձայնի՝ ըստ մարդկային բնութեանս խօսից ստէպ ստէպ առ բան հոլովեր։ Եւ սա զոր օրինակ յառաջինն անդ 'Լերոնի ումեմն կայսեր 'ի սենեակն լիներ գովող, այսպէս 'ի վերջնումն աստ յոգնաբաստիկ իշխանիս մերոյ [1] տեսաք օրհնիչս։

[1] Ջուանշիրի։

Ինդ որ թէպէտ առաւելապանչ զարմացաք՝ սակայն ոչ այնչափ զոր հանդերձեալ եմ ասել. զի յորժամ կամէր յորս ինչ ելանել կամ 'ի զբօսանս խաղու, տեսանէաք 'ի յելս արքայաչու կազմութեան՝ արտաքոյ պարսպին 'ի նախադրան ճանապարհին որպէս առն թագաւորի յերկրպագութիւն եկեալ՝ անարի, անբարի, անհեգեդ կենդանին վիմահասակն փիղ, որոյ գերանաձև սրբունքն որպէս լեառն ինչ 'ի վեր բարձեալ ունէին, և զիսելապատակէ անտի ըստ չարաթոյն սողնոյ նմանութեան 'ի վայր կոյս կախեալ՝ ձևանայր պատիճ, զոր առ գետնովն շրջշրջելով, այսր անդր ստէպ ստէպ դարձուցանելով, և ուղղորդաձև 'ի վեր կանգնելով, և մերթ յինքն քնթռնեցուցանելով. և նա ուժգնակի մռնչմամբ զտուրևառութի շընչոյն ընդ խոռոչափողն արտաքս հոսելով. արդարև ասեմ թէ իբրև բեհմութ շարժնոյն գլխոյ, ահաբեկ զարհուրումն լիներ դողութեամբ բնութեան մարդոյ։

Տեսանէաք և զերիվարս ածեալ սիգասարբք պերճասոսորդք, ճեմողք, ճեպողք և ևս ճախրասլացք, որք հողմավար թեթևութեամբ զարշաւանս առնէին, ոսկեսանձ թամբօք, և գեղեղեալ զինուք։

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Մարսողութիւն։

Դիոուարամարս ուտելեաց մէջ գլխաւորներն են անուշ բաներ, տհաս և թթու պտուղներ, որոնք նոյն օրուան մէջ կերուած ուրիշ բաներն ալ մարսելու շատ նեղութիւն կուտան։ Իսկ շատակերութեամբ՝ ինչ և իցէ բանով ալ որ ըլլայ ստամոքսը ծանրացընելը միշտ վնասակար է. վասն զի կամ փխուք կուգայ անմարսողութեամբ կամ սաստիկ ստամոքսի ցաւ, ուսկից նաև ա-